ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-273-28.02.2018,14.03.2018-ԳԿ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի անվանումը փոխել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» անվանումով՝ համապատասխանեցնելով շրջանառվող նախագծի անվանմանը:	Նախագծում կատարվել է փոփոխություն	**Ընդունվել է**
	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է սահմանել, որ Հեռուսատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի պարտականությունները գերակայում են նրա այլ գործունեության նկատմամբ:	Նախագծում կատարվել է փոփոխություն:	**Ընդունվել է**
	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Առաջարկվում է «Հեռուստեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 16-րդ մասում «հեռուստառադիոընկերությունների» բառը փոխարինել «հեռուստաընկերությունների» բառով՝ հաշվի առնելով, որ նշված կետում սահմանված կանոնը վերաբերում է տեղական հեռուստաընկերություններին:	Նախագծում կատարվել է փոփոխություն:	**Ընդունվել է**
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 29-րդ հոդվածի 9-րդ մասում հստակ սահմանված չէ գրավոր տեղեկացնելու պարտավորության ժամկետները: Առաջարկվում է սահմանել, թե մրցութային հանձնաժողովի նախագահն ինչ ժամկետում է տեղեկացվում Հանրային	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	**Ընդունվել է**

			հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի թափուր տեղի մասին:		
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 34-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվող «մամուլ» եզրույթը համապատասխանեցնել նախագծում առավելապես կիրառվող «զանգվածային լրատվության միջոցներ» եզրույթին	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	**Ընդունվել է**
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է հանել այն դրույթը, որի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը իր կայքում չի հրապարակում ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, եթե դրանք պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկատվություն, քանի որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը չեն կարող օրենքով պահպանվող գաղտնի տեղեկատվություն պարունակել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն	**Ընդունվել է**
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 44-րդ հոդվածի 8-րդ մասում նախատեսված «անձնական շահագրգռվածություն» և «շահագրգռվածություն» ձևակերպումները փոխարինել «շահերի բախում» բառակապակցությամբ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն	**Ընդունվել է**
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 44-րդ հոդվածի9-րդ մասի 1-ին կետը վերաշարադրել հետևալ խմբագրությամբ. «պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ **դիրքորոշում հայտնելուց և քվեարկությանը մասնակցելուց:»:**	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն	**Ընդունվել է**

	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 45.1 հոդվածի 1-ին մասով և նույն հոդվածի 7-րդ մասով գործառույթները հստակեցնելու նպատակով պարտավորեցնել Հանձնաժողովին մշակել և հրապարակել հստակ ընթացակարգ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն	**Ընդունվել է**
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Սաղաթելյան	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 27-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում օգտագործվում է «դատարանի վճռով» ձևակերպումը, մինչդեռ նախագծի 29-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ և 38-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում օգտագործվում է «դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով» կամ «դատավճռով» ձևակերպումները: Հետևաբար Նախագծի նշված դրույթների միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված դատական ակտը կարող է կայացվել նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից, առաջարկվում է բոլոր նշված մասերում օգտագործել «դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ձևակերպումը» հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսգրքերը:	Ընդունվել է մասնակի: Նախագծով «դատարանի վճռով» հասկացությունը փոխարինվել է «դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով» հասկացությամբ՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ օգտագործվող համանման տերմինաբանությունը:	**Ընդունվել է**